جامعة يريفان الحكومية

قسم الدراسات العربية

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

د.صونا طونيكيان، يرفاند ميناسيان

Սոնա Տոնիկյան, Երվանդ Մինասյան

المنهج في قواعد النحو والإعراب

Գրական արաբերենի շարահյուսություն՝ վերլուծության օրինակներով

Հաստատված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից որպես դասագիրք բուհերի ուսանողների համար։

دار نشر جامعة يريفان الحكونية

ԵՊՀ հրատարակչություն

يريفان ٢٠٢٠

ԵՐԵՎԱՆ 2020

ՀՏԴ 811.411.21(07):
ԳՄԴ 81.2 Արաբ ց73
Մ 710

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
գիտխորհուրդը։

Խմբագիրներ՝
Ա. Դանիելյան
Գ. Հովհաննիսյան
բ.գ.թ. Մ. Հովհաննիսյան
Խեյրի Աբու Շահին (Եգիպտոս)

Տոնիկյան Ս., Մինասյան Ե.
Մ 710 Գրական արաբերենի շարահյուսություն՝ վերլուծության օրինակներով։ – Եր.։ ԵՊՀ հրատ., 2020, 468 էջ։

Դասագիրքը նախատեսված է Արևելագիտության ֆակուլտետի արաբական բաժնի 2-4-րդ կուրսերի ուսանողների, ինչպես նաև համեմատական լեզվաբանությամբ զբաղվողների համար։

ՀՏԴ 811.411.21(07)
ԳՄԴ 81.2 Արաբ ց73

ISBN 978-5-8084-2440-1

© جامعة يريفان الحكومية، ٢٠٢٠

© صونا طونيكيان، برفند ميناسيان

© ԵՊՀ հրատ., 2020

© Տոնիկյան Ս., Մինասյան Ե., 2020

الفهرس
Բովանդակություն

Հեղինակների կողմից 17
أقسام الكلمة 18
ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ 18
المبني والمعرب 20
ԹԵՔՎՈՂ ԵՎ ՉԹԵՔՎՈՂ ԲԱՌԵՐ 20
الإعراب 20
ԹԵՔՈՒՄ 20
علامات الإعراب الأصلية 20
Թեքման հիմնական ցուցիչները 20
علامات الإعراب الفرعية 22
Թեքման երկրորդական ցուցիչները 22
البناء 30
ԹԵՔՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 30
علامات البناء 30
Թեքման չենթարկվելու ցուցիչները 30
المبتدأ 34
ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ 34
أحكام المبتدأ 34
Անվանական նախադասության ենթակայի արտահայտման դիրքերը 34
أنواع المبتدأ 37
Անվանական նախադասության ենթակայի արտահայտման տեսակները 37
تعريف المبتدأ وتنكيره 40

Անվանական նախադասության ենթակայի որոշյալ և անորոշ առումները 40
حذف المبتدأ 45
Անվանական նախադասության ենթակայի զեղչումը 45
الخبر 48
ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ 48
أنواع الخبر 48
Անվանական նախադասության ստորոգյալի տեսակները 48
تقديم الخبر على المبتدأ 52
Անվանական նախադասության ստորոգյալի նախադրումը 52
حذف الخبر 55
Անվանական նախադասության ստորոգյալի զեղչումը 55
الفاعل 59
ԳՈՐԾՈՂ ԵՆԹԱԿԱ 59
أحكام الفاعل 61
Գործող ենթակայի արտահայտման դիրքերը 61
أنواع الفاعل 66
Գործող ենթակայի տեսակները 66
نائب الفاعل 72
ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ (ԲՌՑ.՝ ՓՈԽԵՆԹԱԿԱ) 72
صياغة الفعل المبني للمجهول 72
Բայի կրավորական սեռի կազմությունը 72
حذف الفاعل 73
Գործող ենթակայի զեղչումը 73
أنواع نائب الفاعل 75
Կրավորական նախադասության ենթակայի տեսակները 75

إنّ وأخواتها 81
إنّ-Ն ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ..... 81
اسم الأحرف المشبّهة بالفعل..... 83
Բայանման մասնիկով սկսվող նախադասության ենթական..... 83
خبر الأحرف المشبّهة بالفعل 85
Բայանման մասնիկով սկսվող նախադասության ստորոգյալը..... 85
تقديم خبر الأحرف المشبهة على اسمها وجوباً 87
Բայանման մասնիկով սկսվող նախադասության ստորոգյալի պարտադիր նախադրումը ենթակային 87
تقديم خبر الأحرف المشبهة على اسمها جوازاً..... 88
Բայանման մասնիկով սկսվող նախադասության ստորոգյալի հնարավոր նախադրումը ենթակային 88
حالات استخدام إنّ وأنّ..... 90
أنّ-և إنّ-ի կիրառությունը 90
كان-Ն ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԲԱՅԵՐԸ..... 94
أنواع كان وأخواتها من حيثُ التمام والنقصان 94
كان-ի և համանման բայերի տեսակներն ըստ լիարժեքության և թերիության հատկանիշի..... 94
الأفعال التامة 95
Լիարժեք բայեր..... 95
الأفعال الناقصة..... 96
Թերի գործառույթով բայեր 96
حالات تصريف الأفعال الناقصة 100
Թերի գործառույթով բայերի խոնարհումը..... 100
خبر الأفعال الناقصة 104
Թերի գործառույթով բայերի ստորոգյալը 104
تقديم وتأخير خبر الأفعال الناقصة 106

Թերի գործառույթով բայերի ստորոգյալի նախադրումն ու հետադրումը....106
الحروف العاملة عمل ليس 110
ليس-ի գործառույթն իրականացնող մասնիկները....110
كاد وأخواتها 111
كاد-Ն ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԲԱՅԵՐԸ....111
أحكام خبر أفعال المقاربة والرجاء والشروع....112
Մոտալուտ գործողություն, խնդրանք և մեկնարկ ցույց տվող բայերի ստորոգյալի քերականական հատկանիշները 112
ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ 116
المفعول به المقدّم....122
Նախադաս ուղիղ խնդիր....122
المفعول المطلق 125
ԲԱՑԱՐՁԱԿ ԽՆԴԻՐ....125
نائب المفعول المطلق....128
Բացարձակ խնդրի պաշտոնակատար....128
المفعول معه 133
ՈՒՂԵԿՑՈՂ ԽՆԴԻՐ....133
أحكام النصب على المعية 133
Ուղեկցող խնդրի խնդրառական դիրքի քերականական բնորոշիչները....133
المفعول فيه....140
ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ 140
النائب عن ظرف الزمن....146
Ժամանակի պարագայի պաշտոնակատար....146
النائب عن ظرف المكان 148
Տեղի պարագայի պաշտոնակատար 148

أحكام ظرف الزمن أو المكان 149
Տեղի և ժամանակի պարագայի բնորոշիչները 149
أحكام ظرف الزمن. 150
Ժամանակի պարագայի բնորոշիչները 150
أحكام ظرف المكان. 151
Տեղի պարագայի բնորոշիչները 151
الظروف المشتركة بين الزمن والمكان 156
Տեղի և ժամանակի պարագայական անուններ 156
المفعول لأجله أو له 163
ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ 163
أحوال المفعول لأجله 165
Պատճառի և նպատակի պարագայի շարահյուսական դիրքի իրացման տարբերակները 165
نصب المفعول لأجله بغير الفعل 166
Բայազուրկ նախադասության պատճառի և նպատակի պարագայի խնդրառական դիրքը 166
الحال 169
ՎԻՃԱԿԻ ՊԱՐԱԳԱ 169
أنواع الحال 169
Վիճակի պարագայի արտահայտման եղանակները 169
أنواع صاحب الحال 174
Վիճակի կրողի տեսակները 174
الحال الجامدة 178
Քարացած վիճակի պարագա 178
تعابير تعرب حالا 182
Որպես վիճակի պարագա վերլուծվող արտահայտություններ 182
التمييز 185

ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐ 185
أقسام التمييز 185
Առանձնացման խնդրի տեսակները 185
أنواع تمييز الجملة: 192
Նախադասության առանձնացման խնդրի տեսակները 192
أحكام التمييز 196
Առանձնացման խնդրի շարահյուսական բնորոշիչները 196
الاِسْتِثْناء 198
ԲԱՑԱՌՈՒՄ 198
أركان الاستثناء وأدواته: 198
Բացառման բաղադրիչներն ու միջոցները 198
المستثنى بإلاّ 199
إلاّ մասնիկով բացառված անունը 199
حالات الاستثناء 199
Բացառման ձևերը 199
أحكام الاستثناء بإلاّ 203
إلاّ-ով բացառված անվան քերականական բնորոշիչները 203
أنواع الاستثناء 205
Բացառման տեսակները 205
المستثنى بـ"غير" و"سِوَى" 206
Բացառումը՝ غير և سِوَى մասնիկների միջոցով 206
المستثنى بـ"عدا" و"خلا" و"حاشا" 212
Բացառումը՝ عدا, خلا և حاشا մասնիկներով 212
المنادى 214
ԿՈՉԱԿԱՆ 214
أحرف النداء 214

Կոչական մասնիկներ 214
أقسام المنادى 215
Կոչականի տեսակները 215
المنادى المعرب 215
Թեքման ենթարկվող կոչական 215
المنادى المبني 217
Թեքման չենթարկվող կոչական 217
النداء بـ "أيّها" و"أيّتها" 219
أيّها և أيّتها մասնիկներով կոչը 219
أحكام نداء الاسم المضاف إلى ياء المتكلّم 221
Առաջին դեմքի կցական դերանվանը լծորդված անվանն ուղղված կոչի քերականական բնորոշիչները 221
أحكام نداء كلمتي "أب" و"أمّ" 223
«Հայր» և «մայր» կոչականների քերականական բնորոշիչները 223
المنادى المرخم 224
Փաղաքշական կոչական 224
نداء الاسم المضاف إلى اسم مضاف إلى ياء المتكلّم 226
Առաջին դեմքի կցական դերանվանը լծորդված անվանն ուղղված կոչը 226
أنواع النداء 227
Կոչի տեսակները 227
أركان الاستغاثة. 229
Օգնության կոչի բաղադրիչները 229
أحوال المستغاث وإعرابه 230
Օգնության կոչի օբյեկտ անվան շարահյուսական դիրքի իրացման տարբերակները 230
أسلوب الشرط 233

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ.....233
أدوات الشرط.....235
Պայմանի միջոցներ.....235
أدوات الشرط الجازمة.....235
Բայի ընդհատ դիրք պահանջող պայմանի միջոցներ.....235
أدوات الشرط غير الجازمة.....247
Բայի ընդհատ դիրք չպահանջող պայմանի պարագաներ.....247
استعمالات إذا الإعرابية. 255
إذا-ի կիրառության դեպքերը վերլուծության մեջ.....255
مواضع اقتران جواب الشرط بالفاء 260
ف մասնիկի՝ գերադաս նախադասությանը նախադրվելու դեպքերը 260
حذف فعل الشرط وجواب الشرط 265
Պայմանի պարագա ստորադաս նախադասության ստորոգյալի և գերադաս նախադասության զեղչումը 265
التوابع.....268
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ.....268
التوكيد.....268
Սաստկական կառույց 268
أنواع التوكيد 269
Սաստկական կառույցի տեսակները 269
البدل.....279
Փոխարինական կառույց.....279
أنواع البدل.....280
Փոխարինական կառույցի տեսակները.....280
العطف 283
Շաղկապում.....283

عطف بيان 284
Բացահայտող շաղկապում 284
مواضع في اللغة لعطف البيان 286
Բացահայտող շաղկապի դեպքերը 286
عطف النسق أو المعطوف بالحرف 289
Համադասության շաղկապ կամ մասնիկով շաղկապյալ 289
استعمال حروف العطف 290
Շաղկապների կիրառումը 290
أحكام العطف 301
Շաղկապի քերականական բնորոշիչները 301
النعت 304
Որոշիչ 304
شرط النعت 305
Որոշչի արտահայտումը 305
مطابقات النعت لمنعوته 311
Որոշչի և որոշյալի համաձայնությունը 311
صفات لا تطابق موصوفها 316
Որոշյալի հետ չհամաձայնող որոշիչները 316
أنواع النعت 319
Որոշչի տեսակները 319
تعدّد النعت 322
Բազմակի որոշիչ 322
تعدّد المنعوت 323
Բազմակի որոշյալներ 323
الاختصاص 324
Մասնավորող կառույց 324

الاسم الممنوع من التنوين أو الصرف 328
ԱՆՈՐՈՇ ՀՈԴ ՉԸՆԴՈՒՆՈՂ ԿԱՄ ՁԵՎԱԲԱՆՈՐԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ԱՆՈՒՆ 328
الصفة الممنوعة من التنوين 334
Անորոշ հոդ չընդունող ածականներ 334
صرف الاسم الممنوع من الصرف 336
Ձևաբանորեն սահմանափակված անվան թեքումը 336
أسماء الأفعال 338
ԲԱՅԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՈՒՆՆԵՐԸ 338
شواهد أعرابية 341
Վերլուծության օրինակներ 341
اسم الفاعل 343
ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ 343
عمل اسم الفاعل 345
Ենթակայական դերբայի գործառույթը 345
شروط عمل اسم الفاعل 346
Ենթակայական դերբայի իրացման պայմանները 346
صيغ مبالغة اسم الفاعل 350
Ենթակայական դերբայի սաստկական կաղապարները 350
عمل صيغ مبالغة اسم الفاعل 351
Ենթակայական դերբայի սաստկական կաղապարների գործառույթը 351
الصفة المشبّهة باسم الفاعل 354
ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻՆ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՐԵՆ ՀՈՄԱՆԻՇ ԱԾԱԿԱՆ 354
أوزان صياغة الصفة المشبّهة 355

Ենթակայական դերբային շարահյուսորեն հոմանիշ ածականի կաղապարները.....355
اسم المفعول.....358
ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ.....358
اشتقاق اسم المفعول من الفعل غير الثلاثي.....360
Ոչ եռահարֆ բայից հարակատար դերբայի ածանցումը.....360
عمل اسم المفعول.....360
Հարակատար դերբայի գործառույթը.....360
العدد وكناياته.....364
ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ.....364
الإعداد الصريحة.....365
Բուն թվականներ.....365
حكم العدد مع معدوده في التذكير والتأنيث.....366
Թվականի համաձայնեցումը հաշվվող անվան հետ.....366
تمييز العدد.....367
Թվականի առարկայացումը.....367
إعراب العدد وبناؤه.....373
Թվականի թեքումը.....373
تعريف العدد.....377
Թվականի որոշյալ առումը.....377
صوغ العدد على وزن فاعل.....380
Դասական թվական.....380
كنايات العدد.....384
Անորոշ քանակ արտահայտող անուններ.....384
صياغة كسور الأعداد.....389
Կոտորակային թվականներ.....389

المئوية النسبة 391
Տոկոս 391
إعراب أدوات الاستفهام 393
ՀԱՐՑԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 393
إعراب الجمل 404
ԱՌԱՆՁԻՆ ԱՆԴԱՄԻ ԴԻՐՔ ՁԲԱՂԵՑՆՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 404
الجمل التي لا محلّ لها من الإعراب 413
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՉԵՆԹԱՐԿՎՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 413
حروف الجرّ الزائدة والشبيهة بالزائدة 423
ԱՎԵԼՈՐԴ ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԻԿՆԵՐ 423
نماذج إعراب الفعل 429
ԲԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ 429
إعراب الفعل الماضي 429
Բայի անցյալ ժամանակաձևի վերլուծությունը 429
إعراب الفعل الصحيح 429
Կանոնավոր բայի վերլուծությունը 429
إعراب الفعل الناقص 431
Թերի բայի վերլուծությունը 431
إعراب الفعل المضارع 434
Կանոնավոր բայի ներկա ժամանակաձևի վերլուծությունը 434
إعراب الفعل الصحيح المضارع المرفوع 434
Կանոնավոր բայի ներկա ժամանակաձևի ուղիղ դիրքի վերլուծությունը 434
إعراب الفعل الصحيح المضارع المنصوب 436

Կանոնավոր բայի ներկա ժամանակաձևի խնդրառական դիրքի վերլուծությունը 436
إعراب الفعل الصحيح المضارع المجزوم 438
Կանոնավոր բայի ներկա ժամանակաձևի ընդհատ դիրքի վերլուծությունը 438
إعراب الفعل الناقص المضارع المرفوع 440
Թերի բայի ներկա ժամանակաձևի ուղիղ դիրքի վերլուծությունը 440
إعراب الفعل الناقص المضارع المنصوب 443
Թերի բայի ներկա ժամանակաձևի խնդրառական դիրքի վերլուծությունը 443
إعراب الفعل الناقص المضارع المجزوم 446
Թերի բայի ներկա ժամանակաձևի ընդհատ դիրքի վերլուծությունը 446
إعراب فعل الأمر الصحيح 449
Կանոնավոր բայի հրամայական եղանակի վերլուծությունը 449
إعراب فعل الأمر الناقص 450
Թերի բայի հրամայական եղանակի վերլուծությունը 450
إعراب فعل الأمر المضعّف 451
Կրկնավոր բայի հրամայական եղանակի վերլուծությունը 451
قاموس مصطلحات نحوية عربية ـ أرمنية 453
Քերականական եզրերի արաբերեն - հայերեն բառարան 453
قاموس مصطلحات نحوية أرمنية ـ عربية 460
Քերականական եզրերի հայերեն - արաբերեն բառարան 460

من المؤلفين

في عملية تعليم لغة أجنبية ما تحظى بأهمية كبيرة دراسة الخصائص النحوية لتلك اللغة، فالناس معتادّون على التحدث والكتابة بمعايير نحوية خاصة بلغتهم الأمّ، ولدى سعيهم لتعلم لغة أجنبية يلجأون إلى مقارنة تلك المعايير بمعايير اللغة الأجنبية، وأحياناً إلى التوفيق بينهما. لكن النظم النحوية للغات لكثير من اللغات تختلف عن البعض اختلافاً جوهرياً، خاصة اللغات التي تنتمي إلى أسر لغوية مختلفة. لذا اللجوء إلى التوفيق بين معايير اللغة الأمّ واللغة الأجنبية يؤدي إلى تشويه اللغة الأجنبية.

من المعروف أنّ اللغة الأرمنية تنتمي إلى الأسرة اللغوية الهندوربية بينما تنتمي اللغة العربية إلى الأسرة اللغوية السامية، وهي تختلف اختلافاً محسوسا عن اللغات المنتمية إلى الأسرة الهندوربية من حيث نظام القواعد بما في ذلك النظام النحوي وعلى وجه الخصوص عن اللغة الأرمنية.

إنّ هدفنا من تأليف هذا الكتاب هو تعريف دارسي العربية على خصائص النحو العربي وإبراز نقاط التشابه بين النظامين النحويين العربي والأرمني وذلك عن طريق عرض شروحات مبسطة، قدر الإمكان، للمواضيع النحوية تاعربية غير الموجودة في اللغة الأرمنية.

وقد حاولنا أن نقدّم النحو العربي بمصطلحات قواعد اللغة الأرمنية باستخدام مصطلحات وصفية للظواهر الغريبة على الأرمنية. وحاولنا أيضاً أن نعطي صورة متكاملة أكثر عن خصائص التفكير اللغوي العربي بواسطة عرض نماذج إعرابية.

Հեղինակների կողմից

Օտար լեզու սովորելու գործընթացում մեծ կարևորություն ունի տվյալ լեզվի շարահյուսական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, քանի որ յուրաքանչյուր ոք սովոր է խոսելու և գրելու իր մայրենի լեզվի շարահյուսությանը բնորոշ նորմերով՝ օտար լեզուն մայրենիի հետ համեմատելով, երբեմն էլ՝ հարմարեցնելով: Սակայն հաճախ տարբեր լեզուների շարահյուսական համակարգերը էականորեն տարբերվում են միմյանցից, հատկապես, եթե խոսքը տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուների մասին է, և սեփական լեզվի քերականության շրջանակին օտար լեզվի հարմարեցումը հանգեցնում է վերջինիս աղավաղմանը:

Ինչպես հայտնի է, հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, իսկ արաբերենը՝ սեմական: Վերջինս իր քերականական՝ այդ թվում շարահյուսական, համակարգով զգալիորեն տարբերվում է հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներից, մասնավորապես՝ հայերենից: Ձեռնարկում փորձ է արվում հայերենի քերականության տերմինաբանությամբ ներկայացնելու արաբերենի շարահյուսությունը՝ նկարագրական եզրեր գործածելով լեզվական այն իրողությունների համար, որոնք խորթ են հայերենին:

Ձեռնարկը նպատակ ունի արաբերեն ուսումնասիրողներին ներկայացնելու արաբական շարահյուսության առանձնահատկությունները, վեր հանելու արաբերենի և հայերենի շարահյուսական համակարգերի ընդհանրությունները՝ հնարավորինս մատչելիորեն ներկայացնելով արաբերենի շարահյուսությանը բնորոշ այն երևույթները, որոնք բացակայում են հայերենում: Նախադասությունների շարահյուսական վերլուծությունների միջոցով փորձ է արվում ամբողջական պատկերացում տալու արաբերենի լեզվամտածողության առանձնահատկությունների մասին:

أقسام الكلمة

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

الكلمة في اللغة العربية تقسّم إلى ثلاثة أقسام: اسم، فعل وحرف.

Արաբերենում կա երեք խոսքի մաս՝ անուն, բայ և մասնիկ։

الاسم هو ما يدلّ على معنى في نفسه، ولم يقترن بزمن. وهو:

١. اسم العلم
٢. الصفة
٣. الضمير
٤. اسم الإشارة
٥. اسم الموصول
٦. اسم العدد
٧. المصدر
٨. اسم الفاعل
٩. اسم المفعول
١٠. اسم الفعل
١١. الظرف
١٢. اسم الشرط
١٣. اسم الاستفهام

Արաբերենում «անուն» հասկացությամբ բնորոշվում է այն, ինչն արտահայտում է հիմնական բառային իմաստ՝ առանց ժամանակային նշանակության։ Այս խոսքիմասային խմբում ներառված են.

1. գոյականը,
2. ածականը,
3. անձնական դերանունը,
4. ցուցական դերանունը,
5. հարաբերական դերանունը,
6. թվականը,
7. բայանունը[1],

[1] Բայանունը անորոշ դերբայի փոխանվանաբար գործածությունն է։

8. ենթակայական դերբայը,
9. հարակատար դերբայը,
10. բայական գործառույթ ունեցող անունը,
11. պարագայական անունը,
12. պայմանի անունը,
13. հարցական անունը։

٢. الفعل هو ما يدلّ على معنى في نفسه، واقترن بزمن. ينقسم إلى ثلاثة أقسام، وهي:

- الفعل الماضي
- الفعل المضارع
- فعل الأمر.

2. Արաբերենում բայը մատնանշում է հիմնական բառային իմաստ՝ իր ժամանակային նշանակությամբ, այսինքն՝ ցույց է տալիս հստակ ժամանակում կատարված գործողություն։ Այն լինում է.

1. անցյալ,
2. ներկա,
3. հրամայական։

٣. الحرف هو ما يدلّ على معنى في غيره ويأتي مع الاسم والفعل فقط.

3. Արաբերենում մասնիկը չունի ինքնուրույն կիրառություն և արտահայտում է հարաբերություններ, այդ պատճառով իմաստավորվում է միայն անվան կամ բայի հետ գործածվելիս։

المبني والمعرب

ԹԵՔՎՈՂ ԵՎ ՉԹԵՔՎՈՂ ԲԱՌԵՐ

الكلمات في نحو اللغة العربية تقسّم إلى قسمين: معرَّب ومبني.

Զևաշարահյուսական տեսանկյունից բառերն արաբերենում բաժանվում են երկու խմբի՝ թեքվող և չթեքվող։

الإعراب

ԹԵՔՈՒՄ[2]

الإعراب هو مصطلح نحوي معناه تغيير حركة آخر الكلمة تبعاً لوظيفتها.

Թեքումը՝ որպես շարահյուսական եզր, բառի վերջավորության փոփոխությունն է՝ ըստ նախադասության մեջ դրա զբաղեցրած շարահյուսական դիրքի։

للإعراب علامات أصلية وفرعية.

Թեքական դիրքերն արտահայտվում են յուրաքանչյուր դիրքին բնորոշ քերականական ցուցիչներով, որոնք լինում են հիմնական և երկրորդական։

علامات الإعراب الأصلية

Թեքման հիմնական ցուցիչները

علامات الإعراب الأصلية هي:

---

[2] Թեքումը անվան հոլովական համակարգի և բայի եղանակի (երբեմն էլ՝ կերպի) քերականական կարգն է։

١. الضمة: في حالة الرفع.

Թեքման հիմնական ցուցիչներն են.

1. դամմա (ու) ձայնանիշը բառի ուղիղ դիրքում.

- الكتابُ جديدٌ.

Գիրքը նոր է:

الكتاب: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

جديد: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

٢. الفتحة: في حالة النصب.

2. ֆաթհա (ա) ձայնանիշը բառի խնդրառական դիրքում.

- قابلت ولداً.

Ես հանդիպեցի մի տղայի:

قابلت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

ولدا: مفعول به منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره.

٣. الكسرة: في حالة جرّ[٣].

3. քասրա (ի) ձայնանիշը բառի հարակցական[4] դիրքում.

- قابلت في البيتِ ولداً.

Ես տանը հանդիպեցի մի տղայի:

قابلت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

في: حرف جرّ.

البيتِ: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

ولدا: مفعول به منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره.

٤. السكون: في حالة الجزم[٥].

---

[٣] يكون الجرّ مع الأسماء فقط.

[4] Հարակցական դիրքը հատուկ է միայն անուն խոսքի մասին:

[٥] لا يكون الجزم إلا في الفعل المضارع.

4. սուքունը (դադար) բայի ընդհատ դիրքում[6].

- لا تضحكْ.

Մի՛ ծիծաղիր։

لا: حرف نهي وجزم.

تضحكْ: فعل مضارع مجزوم وعلامة جزمه السكون الظاهر على آخره والفاعل ضمير مستتر تقديره "أنتَ".

علامات الإعراب الفرعية

Թեքման երկրորդական ցուցիչները

علامات الإعراب الفرعية هي ما ينوب عن علامات الإعراب الأصلية.

Թեքման երկրորդական ցուցիչները փոխարինում են հիմնական ցուցիչներին։

ينوب عن الضمة:

Դամմա ձայնանիշին փոխարինում են.

١. الألف: في حالة المثنّى.

1. ا-ը երկակի թվում.

- الكتابان جديدان.

Երկու գրքերը նոր են։

الكتابان: مبتدأ مرفوع وعلامة رفعه الألف لأنّه مثنّى.

جديدان: خبر مرفوع وعلامة رفعه الألف لأنّه مثنّى.

٢. الواو: في حالة جمع مذكّر سالم والأسماء الخمسة[٧].

---

[6] Ընդհատ դիրքը հատուկ է միայն բայի ներկա ժամանակաձևերին։

[٧] الاسماء الخمسة هو مصطلح يُطلق على خمس كلمات في اللغة العربية وهي **أب، أخ، حم، ذو، فو**، وتم إضافة اسم **هن** إليهم ولكنه نادر الاستخدام في اللغة العربية وقد يُعرب في بعض الحالات بالحركات الظاهرة على حرف النون. تجتمع هذه الأسماء في أنّها في محلّ المضاف:

2. و-ը արտաքին կազմության հոգնակի թվի արական սեռի բառերում և երկհարֆ հինգ անուններում[8].

- مثال جمع مذكّر سالم

- արական սեռի բառերի արտաքին կազմության հոգնակի թվի օրինակ՝

- المدرّسون مصريون.

Ուսուցիչները եգիպտացիներ են։

المدرّسون: مبتدأ مرفوع وعلامة رفعه الواو لأنّه جمع مذكّر سالم.

مصريون : خبر مرفوع وعلامة رفعه الواو لأنّه جمع مذكّر سالم.

- مثال الأسماء الخمسة.

- երկհարֆ հինգ անունների օրինակ՝

- أبوك طبيب.

Քո հայրը բժիշկ է։

- تُرفع بحرف الواو عوضاً عن الضمة، مثل: أخوك مهندس.
- تُنصب بالألف عوضاً عن الفتحة، مثل: قابلت أخاك في الشارع.

تُجرّ بالياء عوضاً عن الكسرة، مثل: سلّمْ على أخيك.

[8] Արաբերեն քերականության մեջ «Հինգ անուններ» են անվանվում հետևյալ հինգ երկհարֆ անունները՝ أَب (հայր), أَخ (եղբայր), حَم (աներ), فَم (բերան) ذُو (ունեցող)։ Երբեմն այս անունների թվին են դասում նա هَن (իր, առարկա) բառը, որը, սակայն, հազվադեպ կիրառություն ունի արաբերենում և կարող է չենթարկվել քերականական այն օրենքներին, որոնց ենթարկվում են «Հինգ անունները»։ Այս անուններն առանձնանում են նրանով, որ լծորդական կապակցության առաջին անդամի դիրքում դրանց վերջին ձայնանիշը գրի է առնվում ձայնավոր հարֆի տեսքով.

- ուղիղ դիրքում դամմայի փոխարեն գրվում է و, օրինակ՝ أبوك مهندس (Հայրդ ինժեներ է),
- խնդրառական դիրքում ֆաթհայի փոխարեն գրվում է ا, օրինակ՝ قابلت أخاك في الشارع (Փողոցում հանդիպեցի եղբորդ),
- հարակցական դիրքում քասրայի փոխարեն գրվում է ي, օրինակ՝ سلّمْ على أخيك(Բարևի՛ր եղբորդ)։

أبوك: مبتدأ مرفوع وعلامة رفعه الواو لأنّه من الأسماء الخمسة وهو مضاف.
والكاف: ضمير متّصل مبني على الفتح في محلّ جرّ مضاف إليه.
طبيب: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

٣. ثبوت النون: في حالة الأفعال الخمسة[٩].

3. վերջնային ن-ի առկայությունը բայի հինգ բայաձևերում[10].

- المدرّسون يسافرون.

Ուսուցիչները մեկնում են։

المدرّسون: مبتدأ مرفوع وعلامة رفعه الواو لأنّه جمع مذكّر سالم.
يسافرون: فعل مضارع مرفوع وعلامة رفعه ثبوت النون لأنّه من الأفعال الخمسة.
والواو: ضمير متّصل مبني على السكون في محل رفع الفاعل.
والجملة " يسافرون" في محل رفع الخبر.

ينوب عن الفتحة

Ֆաթհա ձայնանիշին փոխարինում են.

١. الألف: في حالة الأسماء الخمسة.

1.ا -ը երկհարֆ հինգ անուններում.

- قابلت أخاك.

Ես հանդիպեցի եղբորդ։

قابلت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.
أخاك: مفعول به منصوب وعلامة نصبه الألف لأنّه من الأسماء الخمسة وهو مضاف.
والكاف ضمير متصل مبني على الفتح في محل جرّ مضاف إليه.

---

٩ الأفعال الخمسة هي الأفعال المضارعة التي تنتهي بـ "ينَ" و"انِ" و"ونَ" التي تشير إلى الجنس والعدد والإعراب.

10 «Հինգ բայաձևերը» ներառում են անկատար ժամանակի այն բայաձևերը, որոնք ավարտվում են սեռի, թվի և թեքման ցուցիչ հանդիսացող يِنَ, انِ և وُنَ վերջավորություններով։

٢. الياء: في حالة المثنّى وجمع مذكّر سالم.

2. ي-ն երկակի թվում և արական սեռի բառերի արտաքին կազմության հոգնակիում.

- مثال المثنّى:

- երկակի թվի օրինակ՝

- قابلت ولدَيْنِ.

Ես հանդիպեցի երկու տղայի։

قابلت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

ولدين: مفعول به منصوب وعلامة نصبه الياء لأنّه مثنّى.

- مثال جمع مذكّر سالم:

- արական սեռի բառերի արտաքին կազմության հոգնակի թվի օրինակ՝

- قابلت المدرسِينَ.

Ես հանդիպեցի ուսուցիչներին։

قابلت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

المدرسِينَ: مفعول به منصوب وعلامة نصبه الياء لأنّه جمع مذكّر سالم.

٣. حذف النون: في حالة الأفعال الخمسة.

3. վերջնային ن-ի սղումը հինգ բայաձևերում[11].

- المدرّسون لن يسافروا.

Ուսուցիչները չեն մեկնելու։

المدرّسون: مبتدأ مرفوع وعلامة رفعه الواو لأنّه جمع مذكّر سالم.

لن: حرف نفي ونصب.

---

[11] Արաբերենում անցյալ ժամանակի բայը տարբեր մասնիկների նախադրմամբ կարող է տարբեր ժամանակային իմաստներ արտահայտել՝ չհամապատասխանելով հայերենի անցյալ ժամանակին։ Դրանով են պայմանավորված արաբերեն և հայերեն օրինակներում ժամանակային անհամապատասխանությունները։

يسافروا: فعل مضارع منصوب وعلامة نصبه حذف النون لأنّه من الأفعال الخمسة.
والواو: ضمير متّصل مبني على السكون في محل رفع الفاعل، والألف فارقة.
والجملة "لن يسافروا" في محل رفع الخبر.

٤. الكسرة: في حالة جمع المؤنّث السالم.

4. քասրա ձայնանիշը իգական սեռի բառերի արտաքին կազմության հոգնակի թվում.

- قابلت في البيتِ طبيباتٍ.

Ես տանը հանդիպեցի բժշկուհիների:

قابلت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.
في: حرف جرّ.
البيتِ: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.
طبيباتٍ: مفعول به منصوب وعلامة نصبه الكسرة لأنّه جمع مؤنّث سالم.

ينوب عن الكسرة:

Քասրային փոխարինում է.

١. الياء: في حالة المثنّى وجمع المذكّر السالم والأسماء الخمسة.

1. ي-ն երկակի թվի, արական սեռի բառերի արտաքին կազմության հոգնակի թվում և երկհարֆ հինգ անուններում.

- مثال المثنّى:

- երկակի թվի օրինակ՝

- رجع الولد في ساعتَيْنِ.

Տղան վերադարձավ երկու ժամում:

رجع: فعل ماض مبني على الفتح.
الولد: فاعل مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.
في: حرف جرّ.
ساعتَيْنِ: اسم مجرور وعلامة جرّه الياء لأنّه مثنّى.

- مثال جمع مذكّر سالم:

- արական սեռի բառերի արտաքին կազմության հոգնակի թվի օրինակ՝

- رحّبت بالمدرسِينَ.

Ես ողջունեցի ուսուցիչներին:

رحّبت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

بالمدرسِينَ: الباء: حرف جرّ. المدرسِينَ: اسم مجرور وعلامة جرّه الياء لأنّه جمع مذكّر سالم.

- مثال الأسماء الخمسة:

- երկհարֆ հինգ անունների օրինակ՝

- رحّبت بأخيك.

Ես ողջունեցի եղբորդ:

رحّبت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

بأخيك: الباء: حرف جرّ. أخيك: اسم مجرور وعلامة جرّه الياء لأنّه من الأسماء الخمسة وهو مضاف. والكاف ضمير متصل مبني على الفتح في محل جرّ مضاف إليه.

٢. الفتحة: في حالة الأسماء الممنوعة من الصرف[١٢].

2. ֆաթհա ձայնանիշը ձևաբանորեն սահմանափակված անուններում[13],

درستُ في دمشقَ.

Ես սովորել եմ Դամասկոսում:

درستُ: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

في: حرف جرّ.

دمشقَ: اسم مجرور وعلامة جرّه الفتحة لأنّه من الأسماء الممنوعة من الصرف.

---

[١٢] انظر إلى الصفحة ٣١٢.

[13] Տե՛ս էջ 305:

ينوب عن السكون:

Սուքունին փոխարինում է.

١. حذف **النون**: في حالة الأفعال الخمسة.

1. վերջնային ن-ի սղումը հինգ բայաձևերում.

- الطلاب لم يحضروا الدرس.

Ուսանողները ներկա չէին (բոց.՝ չգտնվեցին) դասին։

الطلاب: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

لم: حرف نفي وجزم وقلب.

يحضروا: فعل مضارع مجزوم وعلامة جزمه حذف النون لأنّه من الأفعال الخمسة.

والواو: ضمير متّصل مبني على السكون في محل رفع الفاعل، والألف فارقة.

الدرس: مفعول به منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره

والجملة "لم يحضروا الدرس" في محل رفع الخبر.

٢. حذف حرف العلّة من آخر الفعل المضارع المعتلّ الآخر.

2. վերջնային թույլ հարֆի սղումը անկանոն բայերի ներկա ժամանակաձևերում.

- لم ينسَ الرجل الوعد.

Տղամարդը չմոռացավ խոստումը։

لم: حرف نفي وجزم وقلب.

ينسَ: فعل مضارع مجزوم وعلامة جزمه حذف حرف العلّة.

الرجل: فاعل مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

الوعد: مفعول به منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره

علامات الإعراب المقدّرة

Թեքման՝ ոչ բացահայտ (ենթադրվող) ցուցիչներ

قد لا تظهر العلامات الأصلية بل تُقدّر، وذلك أما للتعذر أو الثقل في الأسماء المقصورة والمنقوصة أو لاشتغال المحل بكسرة لدى اتصال ياء المتكلم بالاسم:

Հիմնական ցուցիչները կարող են լինել նաև ոչ բացահայտ, այսինքն՝ ենթադրյալ։ Դա տեղի է ունենում ي-ով,ا -ով և ى-ով ավարտվող բառերում կամ անվանը առաջին դեմքի դերանուն կցելիս։

- مثال اسم مقصور:

- վերջնային ا-ով բառի օրինակ՝

- العصا طويل.

Ցուպը երկար է։

العصا: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمّة المقدرّة على الألف منع من ظهورها التعذّر.

طويل: فاعل مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.

- վերջնային ى-ով բառի օրինակ՝

- حضرت سلمى.

Սալման եկավ։

حضرت: فعل ماض مبني على الفتح والتاء تاء التأنيث الساكنة.

سلمى: فاعل مرفوع وعلامة رفعه الضمّة المقدرّة على الألف منع من ظهورها التعذّر.

- مثال اسم منقوص:

- վերջնային ي-ով բառի օրինակ՝

- حضر القاضي.

Դատավորը եկավ։

حضر: فعل ماض مبني على الفتح.

القاضي: فاعل مرفوع وعلامة رفعه الضمّة المقدرّة على الياء منع من ظهورها الثقل.

- مثال اتصال الاسم بياء المتكلم بالاسم:

- անվանը առաջին դեմքի դերանվան կապակցման օրինակ՝

- قرأت كتابي.

Ես կարդացի իմ գիրքը։

قرأت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء والتاء ضمير متصل مبني على الضم في محل رفع الفاعل.

كتابي: مفعول به منصوب وعلامة نصبه الفتحة المقدرّة على ما قبل الياء منع من ظهورها اشتغال المحل بالكسرة.

البناء

ԹԵՔՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

مصطلح نحوي معناء ثبوت آخر الكلمة على حالة واحدة لا تتغيّر وإن تغيّرت المعاني النحوية التي تأدّيها هذا الكلمة.

Քերականական ձևակերպմամբ թեքման բացակայությունը (բռց.՝ «կառուցում») բառի չթեքվելու հատկանիշն է՝ անկախ տվյալ բառի քերականական իմաստներից և գործառույթներից։

المبني في اللغة العربية ثلاثة أنواع:

١. الحرف

٢. الفعل الماضي، فعل الأمر، والفعل المضارع إذا اتصلت به نون النسوة أو إحدى نوني التوكيد

٣. بعض الأسماء كضمائر، وأسماء الشرط والإشارة والموصول والاستفهام.

Չթեքվող անունները լինում են երեք տեսակ՝

1. մասնիկ,

2. բայի անցյալ ժամանակաձև, հրամայական եղանակ, ինչպես նաև ներկա ժամանակաձևի բայեր, եթե դրանք երկրորդ և երրորդ դեմքի հոգնակի իգական ձևեր են, կամ եթե դրանց միացել է հաստատող երկու ن հարֆերից որևէ մեկը,

3. որոշ անուններ, օրինակ՝ պայմանի անունները, անձնական, ցուցական, հարաբերական դերանունները, հարցական անունները և այլն։

علامات البناء

Թեքման չենթարկվելու ցուցիչները

علامات البناء كعلامات الإعراب، وهي السكون، والفتح، والضمّ والكسر.

Թեքման չենթարկվելու ցուցիչները նույնն են, ինչ թեքման ցուցիչները։ Դրանք են սուքունը, ֆաթհան, դամման և քասրան։

أ.علامات البناء في الحرف:

الحروف كلّها مبنية، وعلامة بنائها تتغيّر من حرف إلى آخر، ولا تنظّمها قاعدة، وهي:

- السكون، مثل: هَلْ، مِنْ. تكون حركة الحرف الفتحة، بسبب التخلص من التقاء الساكنين، مثل: خرجتُ مِنَ البيتِ، هو بعيد عنِ البيت.

- الفتح، مثل: إنَّ، وأخواتها.

- الكسر، مثل: لام التعليل، مثل: جلستُ لأشربَ الشاي، ولام الأمر، نحو: لِيقرأْ.

- الضم، مثل: منذُ.

ա) Մասնիկների վերջավորությունները

Բոլոր մասնիկները քարացած են. չեն թեքվում և ունեն տարբեր վերջավորություններ: Չկա որևէ կանոն, որը կարգավորի դրանց վերջավորությունը (այսինքն՝ վերջին հարաքան), դրանք են.

- սուքունը, օրինակ՝ هَلْ (արդյոք), مِنْ (-ից): Սուքունով ավարտվող մասնիկներին որոշիչ հոդ հաջորդելու դեպքում այս մասնիկները ստանում են ֆաթհա կամ քասրա ձայնանիշ, քանի որ արաբերենում երկու ձայնավորազուրկ տառեր չեն կարող իրար հաջորդել, օրինակ՝ خرجتُ مِنَ البيتِ (Ես դուրս եկա տնից), هو بعيد عنِ البيت (Նա հեռու է տնից):

- ֆաթհան, օրինակ՝ إنَّ-ն (իսկապես) և համանման մասնիկները:

- քասրան. օրինակ՝ لِ (համար), ինչպես جلستُ لأشربَ الشاي (Նստեցի, որ խմեմ թեյը) հորդորական վերաբերական لِ մասնիկը, ինչպես لِيقرأْ (Թող նա կարդա),

- դամման, օրինակ՝ منذُ (ի վեր):

ب. علامات البناء في الفعل:

բ) Չթեքվող բայերի վերջավորություններն են.

١. الفتح في الأفعال الماضية، مثل: كتبَ، كتبَتْ، كتبا وكتبتا،

٢. الضم في الأفعال الماضية مثل: كتبُوا،

٣. السكون:

- في الأفعال الماضية، مثل: كتبْتُ، كتبْتَ، كَتَبْتِ، كتبْنَا، كتبْتم، كتبْتنَ، كتبْن

- في أفعال الأمر، مثل: أُكتبْ وأكتبْن.

٣. وحذف النون في أفعال الأمر، مثل: اُكْتُبي، اُكْتُبا، اُكْتُبوا.

٤. حذف حرف العلة في أمر الأفعال المعتلّة: مثل: اِمْشِ، اُدْعُ، اِنْسَ.

1. ֆաթհան անցյալ ժամանակի բայերում, օրինակ՝ كتبَ (նա (ար.) գրեց), كتبَتْ (նա (իգ.) գրեց), كتبا (նրանք երկուսով (ար.) գրեցին) և كتبتا (նրանք երկուսով (իգ.) գրեցին),

2. դամման անցյալ ժամանակի բայերում, օրինակ՝ كتبُوا (նրանք (ար.) գրեցին),

3. սուքունը.

- անցյալ ժամանակի բայերում, օրինակ՝ كتبْتُ (գրեցի), كتبْتَ (դու (ար.) գրեցիր), كَتَبْتِ (դու (իգ.) գրեցիր), كتبْنَا (գրեցինք), كتبْتم (դուք (ար.) գրեցիք), كتبْتنَ (դուք (իգ.) գրեցիք) և كتبْن (նրանք (իգ.) գրեցին),

- հրամայական եղանակի բայերում, օրինակ՝ أُكتبْ (գրի՛ր (ար)) և أكتبْن (գրե՛ք (իգ.)),

4. ن-ի սղումը հրամայական եղանակի բայերում, օրինակ՝ أُكْتُبي (գրի՛ր (իգ)), أُكْتُبا (գրե՛ք երկուսով) և أُكْتُبوا (գրե՛ք (ար.)),

5. արմատական վերջին թույլ հարֆի սղումը հրամայական եղանակի բայերում, օրինակ՝ اِمْشِ (քայլի՛ր), اُدْعُ (հրավիրի՛ր) և اِنْسَ (մոռացի՛ր),

ت. علامات البناء في الاسم هي:

١. السُّكون، مثل: كمْ، مَنْ، ومَاْ.

٢. الكسر، مثل: هؤلاءِ، وأمسِ وما جاء على وزن فَعَالِ من الأعلام المؤنثة، مثل: حَذَامِ، ونَوَارِ.

٣. الضَّم، مثل: قبلُ، وبعدُ (إذا حُذف المضاف إليه ونُوي ثبوت معناه دون لفظه) مثل: لم يأتِ بعدُ، وحيثُ، مثل: مصر أكبر الدول العربية من حيثُ عدد السكان.

٤. الفتح، كما في الأعداد المركبة من "أحدَ عشَر" حتى "تسعةَ عشرَ" ما عدا الجزء الأوّل من "اثني عشرَ".

գ) Չթեքվող անունների վերջավորություններն են.

1. սուքունը, օրինակ՝ كمْ (քանի), مَنْ (ով) مَاْ (ինչ),

2. քասրան,

- օրինակ՝ هؤلاءِ (սրանք), أمسِ (երեկ),

- فَعَالِ կաղապարի իգական սեռի հատուկ անուններում, օրինակ՝ حَذَامِ (Հազամ(ի)), نَوَارِ (Նաուար(ի)),

3. դամման, օրինակ՝ قبلُ (նախկինում) և بعدُ (հետագայում) բառերում, այսինքն, երբ بعد և قبل բառերից հետո չի նշվում, թե ինչից հետո կամ առաջ, حيثُ (տեսանկյուն), օրինակ՝ مصر أكبر الدول العربية من حيثُ عدد السكان (Եգիպտոսն արաբական ամենամեծ պետությունն է բնակչության թվով)։

4. ֆաթհան 11-19 բաղադրյալ թվականներում՝ բացառությամբ 12-ի երկուսի։

المبتدأ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ

<u>هو الاسم الذى تبدأ به الجملة الاسمية، ويقع في أول الجملة لكي نحكم عليه أو نخبر عنه.</u>

Անվանական նախադասության ենթական այն անունն է, որով սկսվում է անվանական նախադասությունը, և որի մասին տեղեկություն է հաղորդում ստորոգյալը։

أحكام المبتدأ

Անվանական նախադասության ենթակայի արտահայտման դիրքերը

١. أن يكون المبتدأ اسماً مرفوعاً:

1. Անվանական նախադասության ենթական ուղիղ դիրքով[14] (marfūε) դրված անուն է։

- <u>العلمُ</u> نورٌ.

<u>Գիտելիքը</u> լույս է։

العلمُ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

نورٌ: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

٢. قد يُجَرّ المبتدأ بـ"من" الزائدة إذا كان نكرة وسُبق بنفي أو استفهام:

2. Անվանական նախադասության ենթական ավելորդ "من" (ից)[15] մասնիկի ազդեցությամբ կարող է դրվել հարակցական դիրքով, եթե այն անորոշ է, և նրան նախորդում է ժխտական կամ հարցական մասնիկ.

- هل في الدار <u>من أحدٍ</u>؟

Տանը <u>որևէ մեկը</u> (բռց.՝ մեկից) կա՞։

---

[14] Հաճախ համարժեք է հայերենի ուղղական հոլովին։

[15] Տվյալ դիրքում այս մասնիկը իմաստակիր չէ։

هل: حرف استفهام لا محل له من الإعراب.
في: حرف جرّ.
الدار: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.
وشبه الجملة "في الدار" في محل رفع خبر.
من: حرف جرّ زائدة.
أحدٍ: مبتدأ مؤخّر مجرور لفظاً ومرفوع محلاً.

- ما في الدار من أحدٍ.

Տանը ոչ մեկը (բոց.՝ մեկից) չկա։

ما: حرف نفي.
في: حرف جرّ.
الدار: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.
وشبه الجملة "في الدار" في محل رفع خبر مقدّم.
من: حرف جرّ زائدة.
أحدٍ: مبتدأ مؤخّر مجرور لفظاً و مرفوع محلاً.

☝ وقد يُجَرّ المبتدأ بـ"ب" الزائدة إذا كان المبتدأ بلفظ "حَسْب" أو إذا كان بعد "إذا" الفجائية، أو إذا كان خبره اسم الاستفهام "كيف":

☝ Անվանական նախադասության ենթական կարող է ավելորդ "ب" (ով) մասնիկի ազդեցությամբ դրվել ի թեքմամբ, եթե այն արտահայտված է "حَسْب" (բավարար լինելը) բառով, կամ հաջորդում է "إذا" (հանկարծ) բառին, կամ եթե նրա ստորոգյալը հարցական "كيف" (ինչպես) մասնիկն է։

- بحسبك ليرةٌ.

Քեզ մեկ լիրան էլ բավարար է։

الباء: حرف جرّ زائدة. حسبك: مبتدأ مجرور لفظاً و مرفوع محلاً وهو مضاف.
والكاف: ضمير متصل مبني على الفتح في محل جرّ مضاف إليه.
ليرةٌ: خبر مرفوع بالضمة الظاهرة على آخره.

- خرجت من البيت فإذا بسعيدٍ مقبل.

Դուրս եկա տնից, և հանկարծ Սաիդն էր գալիս։

خرجت: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل.

من: حرف جار.
البيت: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.
فإذا: الفاء: استئنافية. إذا: حرف الفجاءة لا محل له من الإعراب.
بسعيدٍ: الباء: حرف جرّ زائدة. سعيد: مبتدأ مجرور لفظاً و مرفوع محلاً.
مقبل: خبر مرفوع بالضمة الظاهرة على آخره.

- كيف بك والامتحان؟.

Դու ինչպե՞ս ես վերաբերվում քննությանը
(բոց.՝ ինչպե՞ս ես քննության հետ)։

كيف: اسم استفهام مبني على الفتح في محلّ رفع خبر مقدّم.
بك: الباء: حرف جرّ زائدة. والكاف: ضمير متصل مبتدأ مؤخّر تقديره "أنت".
والامتحان: الواو: واو المعية. الامتحان: مفعول معه منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره.

☝ وقد يجر المبتدأ بـ"رُبَّ" الشبيهة بالزائد:

☝ Անվանական նախադասության ենթական կարող է հարակցական դիրքով դրվել վերաբերական (բոց.՝ թարգմանությամբ՝ հավելյալանման) "رُبَّ" (գուցե) մասնիկի ազդեցությամբ։

- رُبَّ رجلٍ كريمٍ استضفتَه.

Գուցե պատվարժան մարդ է նա, ում դու հյուրընկալել ես։

رب: حرف جرّ زائدة.
رجلٍ: مبتدأ مجرور لفظاً و مرفوع محلاً.
كريمٍ: صفة مجرورة وعلامة جرها الكسرة الظاهرة على آخرها.
استضفتَه: فعل ماض مبني على السكون لاتصاله بالتاء، والتاء ضمير متصل مبني على الضمّ في محل رفع الفاعل. والهاء ضمير متصل في محل نصب مفعول به.
والجملة الفعلية "استضفتَه" في محل رفع خبر.

أنواع المبتدأ

Անվանական նախադասության ենթակայի արտահայտման տեսակները

١. يأتي المبتدأ اسماً ظاهراً:

1. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել անվամբ (բոց.՝բացահայտ անվամբ),

- الولد نائم.

Տղան քնած է:

الولد: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

نائم: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

٢. يأتي المبتدأ ضميراً منفصلاً:

2. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել անջատ անձնական դերանվամբ, որը համապատասխանում է հայերենի անձնական դերանունների ուղղական հոլովին.

- أنتَ طالب.

Դու ուսանող ես:

أنتَ: ضمير منفصل مبني على الفتح في محل رفع مبتدأ.

طالب: خبر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.

٣. يأتي المبتدأ مصدراً مؤولاً:

3. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել أن մասնիկով նախադրվող բայական նախադասությամբ, որը հայերեն թարգմանվում է որոշյալ առմամբ դրված անորոշ դերբայով կամ ստորադաս նախադասությամբ.

أن تصومَ خيرٌ لك.

Պաս պահելը լավ է քեզ համար

(բոց.՝ որ պաս պահես, լավ է քեզ համար):

أن: حرف مصدري ناصب.

تصوم: فعل مضارع منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره، والفاعل ضمير مستتر تقديره "أنتَ".

والمصدر المؤول من "أن" والفعل المضارع في محل رفع مبتدأ.
خيرٌ: خبر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
لك: اللام: حرف جرّ. والكاف: ضمير متصل مبني على الفتح في محل جر اسم مجرور.

٤. يأتي المبتدأ اسمَ إشارةٍ:

4. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել ցուցական դերանվամբ.

- هذا كتاب مفيد.

Սա օգտակար գիրք է։

هذا: اسم إشارة مبني على السكون في محل رفع مبتدأ.
كتاب: خبر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
مفيد: صفة مرفوعة وعلامة رفعها الضمة الظاهرة على آخرها.

٥. يأتي المبتدأ اسماً موصولاً:

5. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել հարաբերական դերանվամբ սկսվող ստորադաս նախադասությամբ.

- الذي فاز بالجائزة طالب مجتهد.

Մրցանակը շահողը (բոց.՝ ոնը շահեց մրցանակը) ջանասեր ուսանող է։

الذي: اسم موصول مبني على السكون في محل رفع مبتدأ.
فاز: فعل ماض مبني على الفتح والفاعل ضمير مستتر تقديره "هو".
بالجائزة: الباء: حرف جرّ. الجائزة: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.
طالب: خبر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
مجتهد: صفة مرفوعة وعلامة رفعها الضمة الظاهرة على آخرها.

٦. يأتي المبتدأ جملة وتعرب الجملة مبتدأً باعتبارها كلمة واحدة إعراب حكاية:

6. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել անվանական նախադասությամբ, որը դիտարկվում է որպես մեկ բառ.

- "الوقت من الذهب" مثلٌ قديم.

«Ժամանակը ոսկի է»-ն հին ասացվածք է։

"الوقت من الذهب": مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
مثلٌ: خبر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
قديم: صفة مرفوعة وعلامة رفعها الضمة الظاهرة على آخرها.

٧. يأتي المبتدأ "وصفاً" والمراد في كلمة الوصف اسم الفاعل واسم المفعول والصفة المشبّهة.

7. Անվանական նախադասության ենթական կարող է արտահայտվել «բնութագրմամբ»: «Բնութագրում» նշանակում է ենթակայական կամ հարակատար դերբայ, կամ ենթակայական դերբային շարահյուսորեն հոմանիշ ածականը:

وهذا النوع من المبتدأ لا يحتاج إلى خبر بل يكتفي باسم مرفوع بعده يسد مسد الخبر بشرط أن يكون المبتدأ مسبوقاً بنفي أو استفهام وألا يطابق مرفوعه في المثنّى والجمع.

Անվանական նախադասության ենթակայի այս տեսակը ստորոգյալի կարիք չունի: Նրան հաջորդում է ուղիղ դիրքով դրված անուն, որը ստորոգյալի դիրք է զբաղեցնում պայմանով, որ անվանական նախադասության ենթակային նախորդի ժխտական կամ հարցական մասնիկ, և երկակի ու հոգնակի թվում այն հանդես չգա ուղիղ դիրքով:

مثال الوصف المسبوق بنفي:

Ժխտական մասնիկի նախադրմամբ բնութագրման օրինակ՝

- ما ناجح المهملُ.

Անփույթը հաջողակ չէ[16]:

ما: حرف نفي لا عمل لها.
ناجح: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
المهملُ: فاعل لاسم الفاعل "ناجح" سد مسد الخبر.

---

[16] Նմանատիպ նախադասություններում առկա է արաբերենի և հայերենի ենթակայի և ստորոգյալի անհամապատասխանություն: Արաբերեն մեջբերված օրինակում «հաջողակ»-ը ենթակա է:

مثال الوصف المسبوق باستفهام:

Հարցական մասնիկի նախադրությամբ բնութագրման օրինակ՝

- أنائمٌ زيدٌ؟

Արդյո՞ք քնած է Զեյդը:

أنائمٌ: الهمزة للاستفهام. نائم: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
زيدٌ: فاعل لاسم الفاعل "نائم" سد مسد الخبر.

ويعرب هذا المثل على وجه آخر أيضاً:

Այս օրինակն այլ տարբերակով վերլուծվում է հետևյալ կերպ.

أنائمٌ: الهمزة للاستفهام. نائم: خبر مقدّم مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.
زيدٌ: مبتدأ مؤخّر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.

أما إذا طابق الوصف مرفوعه في المثنّى والجمع فإنّه يعرب خبراً مقدّماً ويعرب الاسم المرفوع بعده مبتدأً مؤخّراً.

Եթե բնութագրումը երկակիում և հոգնակիում հանդես է գալիս ուղիղ դիրքով, ապա այն վերլուծվում է որպես նախադաս ստորոգյալ, իսկ նրան հաջորդող ուղիղ դիրքով դրված անունը՝ որպես հետադաս անվանական նախադասության ենթակա:

- أناجحان التلميذان.

Արդյո՞ք հաջողակ են երկու ուսանողները:

أناجحان: الهمزة للاستفهام. ناجحان: خبر مقدّم مرفوع وعلامة رفعه الألف لأنه مثنّى.
التلميذان: مبتدأ مؤخّر مرفوع وعلامة رفعه الألف لأنه مثنّى.

تعريف المبتدأ وتنكيره

Անվանական նախադասության ենթակայի որոշյալ և անորոշ առումները

الأصل في المبتدأ أن يكون معرفة، لكنّه قد يأتي نكرة في حالات معيّنة. وهي:

Արաբերենում անվանական նախադասության ենթական որպես կանոն որոշյալ է, սակայն որոշ դեպքերում այն կարող է հանդես գալ անորոշ առմամբ, երբ անվանական նախադասության ենթական.

١. أن تكون النكرة موصوفة:

1. որոշյալի դիրքում է.

- رجلٌ مؤمنٌ خير من رجل كافر.

Հավատացյալ մարդը (բոց.՝ մի հավատացյալ մարդ)

ավելի լավ է անհավատ մարդուց:

رجلٌ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

مؤمنٌ: صفة مرفوعة وعلامة رفعها الضمة الظاهرة على آخرها.

خير: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

من: حرف جرّ.

رجل: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

كافر: صفة مجرورة وعلامة جرّها الكسرة الظاهرة على آخرها.

٢. أن تكون النكرة التي وقعت مبتدأ مصغّرة:

2. փաղաքշական/ նվազական անուն է.

- كليبٌ ينبح:

Մի շնիկ է հաչում:

كليبٌ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

ينبح: فعل مضارع مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره، والفاعل ضمير مستتر تقديره "هو".

والجملة الفعلية " ينبح" في محل رفع خبر.

٣. أن تكون النكرة مضافة:

3. լծորդային կապակցության առաջին անդամն է.

- طالب علم خير من طالب مال.

Գիտելիք փնտրողը (բոց.՝ գիտելիք փնտրող)

ունեցվածք փնտրողից լավ է:

طالب: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره وهو مضاف.

علم: مضاف إليه مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

خير: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره وهو مضاف.

من: حرف جرّ.

طالب: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره وهو مضاف.

مال: مضاف إليه مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

٤. أن تكون النكرة دعاء:

4. կոչ կամ մաղթանք է արտահայտում.

- نجاح للطلاب.

Հաջողություն ուսանողներին:

نجاح: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

للطلاب: اللام: حرف جرّ . الطلاب: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

وشبه الجملة " للطلاب" في محل رفع خبر.

٥. أن تكون النكرة بعد واو الحال:

5. նախորդում է و ստորադասական շաղկապը (արաբերենում նման դեպքերում و-ով կապվում է ձևի պարագա ստորադաս նախադասությունը).

- دخلنا الغرفةَ ورجلٌ يدخّن.

Մտանք սենյակ, երբ մի տղամարդ էր ծխում

(բոց.՝ մտանք սենյակ, և մի տղամարդ է ծխում):

دخلنا: فعل ماض مبني على السكون لاتصاله بـ"نا"، و"نا" ضمير متصل مبني على السكون في محل رفع الفاعل.

الغرفةَ: مفعول به منصوب علامة نصبه الفتحة الظاهرة على آخره.

الواو: واو الحال.

رجلٌ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

يدخّن: فعل مضارع مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره، والفاعل ضمير مستتر تقديره "هو".

وجملة " يدخّن" في محل رفع خبر.

وجملة " ورجل يدخّن" في محل نصب حال.

٦. أن تكون النكرة مسبوقة باستفهام:

6. նախադրվում է հարցական մասնիկով.

- أتلميذٌ في الصفّ؟

Արդյո՞ք աշակերտ կա դասարանում:

أتلميذٌ: الهمزة للاستفهام. تلميذٌ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره.

في: حرف جرّ

الصفّ: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره

وشبه الجملة " في الصفّ" في محل رفع خبر.

٧. أن تكون النكرة مسبوقة بنفي:

7. նախադրվում է ժխտական մասնիկով.

- ما حسودٌ فاز.

Ոչ մի նախանձող չի հաղթում:

ما: حرف نفي.

حسودٌ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

فاز: فعل ماض مبني على الفتح والفاعل ضمير مستتر تقديره "هو".

والجملة الفعلية " فاز" في محل رفع خبر.

٨. أن تكون النكرة مسبوقة بظرف أو جارّ ومجرور:

8. նախադրվում է թերի նախադասությամբ (կապական կառույց, որն արաբերենում արտահայտվում է պարագայական անվամբ կամ հարակ-ցական մասնիկով կապակցությամբ).

- أمام الجامعة حديقة.

Համալսարանի դիմաց մի այգի կա:

أمام: ظرف مكان منصوب وعلامة نصبه الفتحة الظاهرة على آخره وهو مضاف.

الجامعة: مضاف إليه مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

وشبه الجملة "أمام الجامعة " في محل رفع خبر مقدّم.

حديقة: مبتدأ مؤخّر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

في الدار رجلٌ.

Տանը (բոց.՝ տան մեջ) մի տղամարդ կա:

في: حرف جرّ

الدار: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره

وشبه الجملة " في الدار" في محل رفع خبر مقدّم.
رجلٌ: مبتدأ مؤخّر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

٩. أن تكون النكرة دالّة على العموم مثل: كلّ، ما:

9. ցույց է տալիս ընդհանրացում, օրինակ՝ كلّ (յուրաքանչյուր), ما (ինչ, ամեն ինչ).

- كلٌّ يموت.

Ամեն ոք մահկանացու է (բոց.՝ մեռնում է):

كلٌّ: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.
يموت: فعل مضارع مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره، والفاعل ضمير مستتر تقديره "هو".
والجملة الفعلية " يموت" في محل رفع خبر.

١٠. أن تكون النكرة بعد لولا:

10. հաջորդում է لولا (եթե չլիներ) մասնիկին.

- لولا مطر لهلك الزرع.

Եթե անձրև չլիներ, ապա ցանքը կփչանար:

لولا: حرف شرط غير جازم، ويُسمّى أيضاً حرف امتناع لوجود.
مطر: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره. والخبر محذوف وجوباً تقديره "موجود".
لهلك: اللام: واقعة في جواب لولا. هلك: فعل ماض مبني على الفتح.
الزرع: الفاعل مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

حذف المبتدأ

Անվանական նախադասության ենթակայի զեղչումը

الأصل في المبتدأ أن يذكر في الكلام. ويحذف جوازاً إذا كان في الكلام ما يدلّ على حذفه وذلك في الإجابات عن الأسئلة، كأن تسأل "من خالد؟"، فاجيب "شاعر" وتقديره "خالد شاعر".

Արաբերենում անվանական նախադասության ենթական սովորաբար նշվում է նախադասության մեջ, սակայն այն կարող է զեղչվել, եթե առկա է նրա զեղչումը ակնարկող որևէ բառ։ Նմանատիպ զեղչում հանդիպում է հարցերի պատասխաններում, օրինակ՝ «Ո՞վ է Խալիդը», «Բանաստեղծ է», այսինքն՝ «Խալիդը բանաստեղծ է»։

ويحذف المبتدأ عادة من العناوين كعناوين الكتب والقصص والصحف. مثل عنوان "حالات رفع الاسم " وتقديره "هذه حالات رفع الاسم ":

Անվանական նախադասության ենթական սովորաբար զեղչվում է գրքերի, պատմվածքների, թերթերի և այլ վերնագրերում, ինչպես՝ «Անվան՝ ուղղական դիրքով դրվելու դեպքերը», որը ենթադրաբար նշանակում է՝ «Սրանք են անվան՝ ուղղական դիրքով դրվելու դեպքերը».

- حالات رفع الاسم.

Անվան՝ ուղիղ դիրքով դրվելու դեպքերը։

المبتدأ محذوف تقديره "هذه".

حالات: خبر مرفوع وعلامة رفعه الضمّة الظاهرة على آخره وهو مضاف.

رفع: مضاف إليه مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره وهو مضاف.

الاسم: مضاف إليه مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

ويحذف المبتدأ وجوباً في حالات متعددة أهمّها:

Անվանական նախադասության ենթական պարտադիր զեղչվում է մի շարք դեպքերում, որոնցից կարևորվում են.

أ. إذا كان في جملة قسمية دل خبرها على القسم: مثلاً: في ذمتي لأناضِلَنَّ في سبيل الوطن. والتقدير: عهد أو قسم في ذمتي. فالجار والمجرور " في ذمتي"

متعلّقان بخبر محذوف لمبتدأ محذوف وجوباً لدلالة الجار والمجرور على القسم والدليل على ذلك جملة جواب القسم "لأناضِلَنَّ ".

ա) եթե նախադասության մեջ ստորոգյալը երդման իմաստ է արտահայտում, օրինակ՝ «Պարտքս է (բոց.՝ պարտքիս մեջ է) պայքարել հանուն հայրենիքի», ինչը բառացիորեն նշանակում է՝ «Երդումը պարտքիս մեջ է»: Անվանական նախադասության ենթակայից բացի՝ այս նախադասության մեջ զեղչված է նաև «այն է» ստորոգյալը: Այսինքն, եթե վերականգնենք բոլոր զեղչված անդամները, նախադասությունը կունենա հետևյալ տեսքը՝ «Երդումս այն է, որ պայքարելու եմ հանուն հայրենիքի»:

- في ذمتي لأناضِلَنَّ في سبيل الوطن.

Պարտքս է պայքարել հանուն հայրենիքի:

في: حرف جرّ.

ذمتي: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره وهو مضاف. والياء ضمير متصل مبني على السكون في محل جرّ مضاف إليه.

وشبه الجملة " في ذمتي" متعلّق بخبر محذوف لمبتدأ محذوف وجوباً تقديره "عهد أو قسم".

لأناضِلَنَّ: اللام: وقعة في جواب القسم، لا عمل لها. أناضِلَنَّ: فعل مضارع مبني على الفتح لاتصاله بنون التوكيد الثقيلة، والنون: نون التوكيد لا عمل لها. والفاعل ضمير مستتر تقديره "أنا".

في: حرف جرّ.

سبيل: اسم مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره وهو مضاف.

الوطن: مضاف إليه مجرور وعلامة جرّه الكسرة الظاهرة على آخره.

ب. إذا كان المبتدأ مصدراً نائباً عن فعله:

բ) եթե անվանական նախադասության ենթական արտահայտված է բային փոխարինող բայանվամբ.

- عملٌ مشكورٌ. أي: عملنا عملٌ مشكور.

Շնորհակալության արժանի գործ է

(այսինքն՝ [մեր գործը] շնորհակալության արժանի գործ է):

عملٌ: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

مشكورٌ: صفة مرفوعة وعلامة رفعها الضمة الظاهرة على آخرها.

والمبتدأ هنا محذوف تقديره "موقفنا".

ت. إذا كان مخصوصاً بالمدح أو الذمّ:

գ) եթե այն ընդգծված գովաբանություն կամ հանդիմանանք է արտահայտում.

- نِعْمَ الرجل خالد.

Ի՜նչ հաճելի մարդ է Խալիդը

(բոց.՝ հաճելի է մարդը. [նա] Խալիդն է)։

نعم: فعل ماض لانشاء المدح مبني على الفتح.

الرجل: فاعل مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

خالد: خبر لمبتدأ محذوف تقديره "هو" مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

- بِئْسَ الرجل الكذوبُ.

Ի՜նչ վատ մարդ է խաբեբան

(բոց.՝ վատն է մարդը. [նա] խաբեբան է)։

بئس: فعل ماض لانشاء الذم مبني على الفتح.

الرجل: فاعل مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

الكذوبُ: خبر لمبتدأ محذوف تقديره "هو" مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

الخبر

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

هو الخبر الذي يُخبر به عن المبتدأ.

Անվանական նախադասության ստորոգյալն անվանական նախադասության ենթակայի մասին տեղեկություն հաղորդող անդամն է։

هو الجزء المكمّل للفائدة، وهو الحكم الذي يطلق على المبتدأ.

Այն ավարտուն միտքն ամփոփող հատվածն է, և այն հատկանիշն է, որը վերագրվում է անվանական նախադասության ենթակային։

أنواع الخبر

Անվանական նախադասության ստորոգյալի տեսակները

يأتي الخبر:

١. اسماً مفرداً:

Անվանական նախադասության ստորոգյալն արտահայտվում է .

1. անվամբ.

- الجو معتدل.

Եղանակը բարեխառն է։

الجو: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

معتدل: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

٢. جملةً اسميةً:

2. անվանական նախադասությամբ.

- الولد اسمه خالد.

Տղայի անունը Խալիդ է։

(բռց.՝ տղան նրա անունը Խալիդ է)։

الولد: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.

اسمه: مبتدأ مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره وهو مضاف. والهاء: ضمير متصل مبني على االضمّ في محل جرّ مضاف إليه.
خالد: خبر مرفوع وعلامة رفعه الضمة الظاهرة على آخره.
وجملة " اسمه خالد " في محل رفع خبر.

☝ إذا أتى الخبر جملة فلا بدّ أن يكون فيها رابط يربطها مع المبتدأ وغالباً ما يكون هذا الرابط الضمير.

